ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	Աստրադեզ Մաքս	ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ	Հեղուկ խտանյութ, որը պարունակում է ՝ 8,5% N,N-բիս(3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին, 18,0% չորրորդային ամոնիումային միացություններ (ՉԱՄ) (գումարային)և այլն: Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ազդեցությամբ գրամ-բացասական և գրամ-դրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչների՝ թեստավորված Mycobacterium terrae DSM 43227 շտամի համար, լեգիոնելոզի հարուցիչների, անաէրոբ վարակների, հատուկ վտանգավոր վարակների (ՀՎՎ)՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի հարուցիչների (սպորասպան ակտիվություն)), վիրուսասպան ազդեցությամբ (արտաընդերային հեպատիտների, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի վիրուսների, ադենովիրուսների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպների, արտաընդերային և ընդերային հեպատիտների, Կոքսակի, ECHO և այլ վիրուսների նկատմամբ), սնկասպան հատկություններով (կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի նկատմամբ՝

			թեստավորված Aspergillus niger թեստ-շտամի կուլտուրայի համար), մակաբուծասպան ակտիվությամբ (այդ թվում՝ Guardia lamblia ցիստերի, Cryptosporidium parvum օոցիստերի, Ascaris lumbricoides ձվիկների, Taeniarhynchus saginatus օնկոսֆերների նկատմամբ): Միջոցը նախատեսված է ցանկացած տեսակի մակերեսների, սենքերի և սարքավորումների ախտահանման և լվացման համար; բժշկական նշանակության արտադրատեսակների նախամանրէազերծման հետ համակցված ախտահանման համար, էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման համար, էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման (ԲՄԱ) համար, բժշկական նշանակության արտադրատեսակների (այդ թվում վիրաբուժական գործիքների ,էնդոսկոպներին կից գործիքների) մանրէազերծման համար; օդի ախտահանման համար՝ տարբեր օբյեկտների վրա փոշեցրման եղանակով: Աշխատանքային լուծույթը նախատեսված է բազմակի օգտագործման համար 45 օրվա ընթացքում: Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
12			